

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	հաւար
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արսասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Սակերիկայի	հաւար
Տարեկան	3 սյր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուգնան տոյր սոս
 շին երեսին հաւար 40 ս.
 րակ վերջին երեսի հա-
 վար 20 սակերիկ է. երե-
 ֆեկ աւելի սկզբակերտու
 հաւար 20 0/0 զեղի կըլ

Վաճառայի հաւար ձևոքի 10 սակերիկ

ՉԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ և զրամ զոկել
 համարորոշանու հաս-
 ցիկն .

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjourn“
 Varna (Bulgarie)

Արսասահմանի հաւար
 ձևոքի
 X 20 ՍԱՆԹԻՄ X
 Պուշկարինոյ հաւար
 ձևոքի
 X 15 ՍԱՆԹԻՄ X

Գրութիւնք և ս չեմ տրուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՂԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃՈՐԷ

ՄԵՐ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ

Ձեռ գիտեր թէ ինչո՞ւ ամէն
 անգամ որ բան մը գրելու փա-
 փաք մը ծնի մէջս՝ զլիսուս մէջ
 շարունակ կը դառնայ սա ոմեր
 վարժարանները՝ ին՝ յախտեան-
 կան հարցը :

Արդեօք անո՞ր համար որ ու-
 րիշներուն պէս ես ալ սուսեցի
 այդ վարժարաններուն շատ ան-
 նպատակաբար և շատ յոռի
 կերպով մատակարարուելուն ե-
 րեսէն : Եւ անո՞ր համար արդեօք
 որ այդ գէշ բանող գործարաննե-
 րուն խղճաւորէն միջակ արտադ-
 րութիւններէն մէկն ալ ես եմ :

Այս առթիւ ըսեմ թէ առաքի-
 նութիւն մըն է իր պակասութիւնը
 խոստովանիլը . բայց կան առա-
 քինութիւններ, որոնց տիրանալը
 մեծ հաճոյք մը չի պատճառեր
 մեզի :

Եւ ես հիմակ ո՞րքան անոյոք
 կը զանեմ սա ճշմարտութիւնը
 թէ մարդ մը կատարելագոյն ըմ-
 բանելու համար ու է հարցի մը
 լուծման ամբողջ կարեւորու-
 թիւնը՝ հարկ է որ իր մորթին
 վրայ զգայ այդ հարցին գոյու-
 թիւն սուղ պատճառներուն բու-
 րը կսկծեցուցիչ հետեւանքները :

Այսպէս, օրինակի համար, օ-
 տար երկիրները ազուոր չէնքե-
 րով զարգարելու ինեղ մարմա-
 ջէն ապուցած սա՞ մեր բարի և
 աստուածավախ հայ հարուստները
 միթէ կրնան հայկական հարցին
 օր առաջ լուծուելուն անհրաժեշ-
 տութիւնը նոյնքան խորունկ
 կերպով զգալ՝ որքան այս պա-
 հուս թրքոսուս—մարգասոյանա-
 կան դաշնակցութեան—սահման-
 ներուն վրայ մերկ և անօթի թա-
 փառող թշուառ հայ գիւղացի-
 ները :

Թեան տակն ինչալու, անոր հա-
 ճոյքին մէկ սուսերկան ըլլալու
 ներկայ կամ ապագայ հաւանա-
 կանութեան :

Միթէ կրնա՞յ, կը հարցնեմ,
 կրնե՞րը այրերուն պոկող թեւե-
 րուն մէջէն գորս քոշելու մար-
 դասիրականը՝ գործին մէջ նոյն-
 քան եռանդ ունենալ պ. Սլաք
 մը՝ որքան օր. Մի՞նի մը :

Սակայն ո՞ր էի :
 Արդեօք պէտք եղածէն աւելի՞
 հեռացայ նիւթէս՝ օրինակներով
 խօսելու պատրուակին տակ :

Այլ ևս ոմեր վարժարանները՝
 ին՝ հարցով ամէնէն քիչ հետա-
 քրքրուողն անգամ համոզուած է
 թէ՛ ամեն բանի մէջ՝ եղածին
 պէս՝ կրթական գործերու մէջ ալ
 է՛ն պատկառելի դերը կիրնայ սա՞
 հրաշագործ գրամին :

Ինչպէս որ կանգեղ մը առանց
 ձէթի լոյս չիտար, այնպէս ալ
 ուսուցիչ մը առանց դրամի դաս
 չիտար . այս բացատրութիւնը
 քիչ մը պատուելիական է, բայց
 քիչ մըն ալ ճշմարիտ է :

Մենք երբէք չպիտի ունենանք
 լաւ ուսուցիչներ և կամ թէ—չի-
 րենք չվիրաւորելու համար—լաւ
 սորվեցնող ուսուցիչներ, մինչեւ
 որ չունենանք մեր տրամադրու-
 թեան տակ լաւ գումարներ :

Միւս կողմէն և թէ օր մը ապա-
 հովուն մեր վարժարաններուն
 համար գիրուկ պիտոճէններ, եր-
 բէք չպիտի կրնան այդ կրթա-
 կան յարկերուն սեմերէն ներս
 սպրդիլ կարգ մը միմոն—պատ-
 տելիներ, որոնց ներկայութեան
 ուղենք չուղենք կը հանդուր-
 ժենք հիմա՞ կանոնաւոր ամա-
 կաններ չկարենալ յնծալնուս
 համար :

Յետոյ սա ալ չմոռնանք որ,
 պատուելիներէն զատ, մեր հի-
 մակուան գրեթէ բոլոր ուսուցիչ-
 ները—արդեօք պիտի վշտանան
 ըսելիքէս—քիչ մը մեր տէր պա-
 պաներուն նման են, ցանցառ
 բացառութիւններով . անոնք ու-
 սուցիչ եղած են պարզապէս ա-

նոր համար որ ուրիշ ոյո՞ւ մը չը
 կրցան գտնել ապրուելու համար
 եւ . զարմանալի բան, վեր-
 ջերս այս կարգի վարժարաններն
 անգամ սկսան պակսիլ հրապարա-
 կէն . մեր վարժարաններուն բա-
 րայական ու բարոյական սնան-
 կութիւնը ա՞յնքան առաջ գնաց
 իրա՞ւ որ շատ տխուր կացու-
 թիւն մըն է ասիկա :

Եւ որո՞նք են պատասխանա-
 տուները սա դժնդակ վիճակին .
 արդեօք ժողովուրդը, արդեօք
 հոգատա՞ր մարմինները, արդ-
 եօք երկո՞ւքն ալ :

Վառնայի մէջ, ամէնէն շքեղ
 փողոցներէն մէկուն վրայ կարգ
 մը գետիններ կը տեսնէք ազգին
 պատկանող և մինչեւ հիմա տա-
 կաւին պարագայ, չոր գետին մնա-
 ցած :

Ու դուք կ'ապշիք պարզապէս
 վառնայիներուն սա ոճրագործ
 անհոգութեան առջեւ : Կ'ապշինք,
 այո՞, որովհետեւ ժողովուրդի մը
 վարժարանին համար թանկագին
 եղող այդ հարստութիւնները 10,
 15, 20 տարիներէ ի վեր գուցէ
 գեռ կը շարունակեն մեռած գը-
 րամագլուխ մնալ :

Ու ձեր աչքին աւելի կը մեծ-
 նայ սա մեր աղքատիկ ծումացի-
 ներուն այն պաշտելի փութիկո-
 տուութիւնը, որով անոնք օգ-
 տուելով հեռու երկիր մը, Քեօս-
 թէնճէյի մէջ, իրենց ունեցած
 փողքիկ մէկ խանութիւն և շքե-
 կրկիւղով նոյն իսկ պարտքի տակ
 մոնելու հարկին առջեւ՝ իրենց
 վարժարաններուն սիրուն համար
 ունեցան այսօր հոն, Քեօսթէնճէ
 սիրուն կալուած մը՝ տարեկան,
 կարծեմ, 4.5000 Ֆրանքի եկա-
 մուտ մը բերող և իր պարագին
 ալ մեծագոյն մասը վճարուած է
 արդէն :

Հապա եթէ կը մտածէք դուք,
 ծումլան ալ վառնա մը եղած ըլ-
 լար ծումլացիները ի՞նչ կալուած-
 ներ պիտի ունենային :

Եւ ինչո՞ւ արդեօք վառնացի-
 ներն ալ չեն ունեցած միեւնոյն

փրկարար հեռատեսութիւնը . ին-
 չո՞ւ այդ սքանչելի գետիննե-
 րուն վրայ սքանչելի շէնքեր չեն
 բարձրացած նոյն իսկ պարտքով :
 Ինչո՞ւ այդ գետինները արժող
 գումարները երկար տարիներ
 փողոցը նետուած են առանց ու
 է օգուտի :

Ինչո՞ւ վառնայի հայերը չեն
 խորհած այս բաներուն վրայ,
 սրպէսզի այսօր լիապէս ապահով-
 ուած ըլլային իրենց վարժարան-
 ներուն ծախքերը :

Եւ ինչո՞ւ, մանաւանդ, գոնէ
 հիմա, չեն սքապարեք անցեալին
 այդ մեծ սխալը գէթ մասամբ
 դարձունելու :

Աններելի յանցանք մը չէ՞ ի-
 րենց սա անտարբերութիւնը .
 որով չեն կրցած և գեռ չեն կր-
 նար կոր իրենց քաղաքին . ի-
 րենց ապրած միջավայրին բոլոր
 նպաստաւոր առաւելութիւններէն
 օգտուիլ աւելի ամուր հիմերու
 վրայ գնելու համար կրթական
 կարեւոր գործը վառնայի մէջ :

Աղղային առած մը կայ, զոր
 հոս տեսնէ յիշեցնելու իրենց .
 ուր է ուշ քան երբէք .»

Թող ուրեմն գոնէ ասկէ վերջը
 ջանան ընել ինչ որ չեն ըրած
 մինչեւ հիմա :

Իրենց համար երբէք պատ-
 տաբեր չէ սա իրողութիւնը թէ
 իրենց վարժարաններն ալ՝ նիւ-
 թականի ապահովութեան տեսա-
 կէտով՝ ու է առաւելութիւն մը
 չունին Պուլկարիոյ ամէնայետին
 քաղաքներու վարժարաններուն
 վրայ :

Ի՞նչ գոնէ հիմա մտածեն տասը
 տարի վերջի վրայ եթէ տասը
 տարի առաջ չեն մտածած հի-
 մակուանին վրայ :

Տիգրան Աճիկեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Միլիտի, 5 դեկտեմբեր

2. Յ. Դ. շնորհակցութեան խումբերը նախաձեռնութիւնը ունեցան ի յիշատակ Պետրի, Օննիկի, Թաթուլի, Անտոնի, Ապրիլի և իրենց պուլկար ընկերներուն հոգեհանգիստ կատարել տալ:

Յրուած սեւ մահազգեբը արդէն հասարակութիւնը եկեղեցի կը հրաւիրէին զեկատ. 1 ի կիրակի առաւոյն: Երգեցիկ խումբը մենէ առաջ իր տեղը գրուած էր և յառկապէս սա որուան առթիւ իր սորված քուսաձայն պատարագի արարողութիւնը կ'երգէր:

Արտակարգ բազմութիւն մը խունուած էր եկեղեցին:

Տշաւորութիւնը շատ խոր էր, որուն նմանը չեմ յիշեր թէ երբեք զգացած ըլլամ:

Հոգեհանգստի արարողութենէն ետք պ. Պիտեան յուզուած շեշտով երկու խօսք ըրաւ որուան հերոսներու յիշատակին:

Նոյն օրուան իրիկունը տեղի ունեցաւ հանգէս մը ներկայացուցումով խոսն:

Չը նայած որ հանգէսին նկարագրութիւնը կ'ալփէր ընել, ես զը գոհանամ միայն յայտնելով, որ հանգէսը իր ամբողջութեան մէջ շատ լուսավորութիւն մը ունեցաւ:

Երգը—յիշենք կախարհներ—բանաստեղծութիւնը, հայդուկին քաջագործութիւնն ու հայուն դժբաղդութիւնը փոխի ի փոխ եկան այնքան խոր տպաւորութիւն մը ձգել ունկնդիրներու վրայ:

Հանգէսին մուտքը համեստ նշանակութեամբ ըլլալուն առ հասարակ ամէն հայ, Յիլիպէի հայութեան մեծամասնութիւնը փութացած էր ներկայ գտնուիլ: Թատրոնը ծայրէ ի ծայր լսեցուն էր:

Դաշնակցական խումբերը իրենք հողացած էին հողահանգիստի ծախքերը, իսկ հանդէսին գուտ հասոյթը, որ իմացածիս նայելով 250 լէվը կանցնի պիտի զրկուի Դոշակի խմբագրութեան:

Հասարակութիւնը շատ գոհ սրտով մեկնեցաւ Թատրոնէն:

ԹՂԹԱԿԻՑ

Կ.ՈՋ ԴՈՍՏԻՄԱՐԱՎՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՆ «ԱՆՉԱՏ ՆԻՒԹԵՐ»ՈՒՆ ՏԵՂ

— ԵՐԵՎԱՆ —

Խնդիրներ կան որոնք գիտաոր աստղերու նման երբեմն երբեմն մէջտեղ կ'ելլան գալու խառնուելու համար օրուան ընթացիկ հարցերուն որոնք իրենց տառել կամ նուազ կարեւորութիւնը ունին: Այս խնդիրներէն մին է նաեւ մեր կիներուն դաստիարակութեան խնդիրը, որ տարիներէ ի վեր ամէն գրիչ բռնենք գիտացող կիներէ, ինչպէս նաեւ լուրջ ու մասնագէտ գրողներէ, քննուած, խառնելու և ծնունտ է առանց ո եւ է օգտակար եղբի մը յանգելու:

Միջոցներ, ծրագիրներ եւ օրինակներ ցոյց արուած են յեղաշրջելու, բարեփոխելու համար այն հիմնաւոր յոռի գրութիւնը որ կը տիրէ մեր ընտանիքներուն եւ վարժարաններուն մէջ աղջիկներու կրթութեան մասին. սակայն ցաւալի է ըսել թէ անոնք ոչ մէկ ազդեցութիւն ունեցած են. ամէն քաղաքակրթութեամբ ազդելու կիները օր օրի առաջ կ'երթան եւ մեր իրական սեսը ետ կը մնայ:

Մեր ընտանիքներուն մէջ կիրք տափակ, գոհնիկ եւ վախկոտ դաստիարակութիւն մը կը ստանայ. դոց պատուհանին ետին, ընկերական շրջանակներէ հեռու, շարունակ բամբասանքի միջավայրին մէջ անիկա կը ծթի, կը հոտի եւ կ'ոչնչանայ. իսկ վարժարաններու մէջ կ'ընթացնուած կրթութիւնը ա'յնքան օղորմելի, ա'յնքան սխալ եւ ա'յնքան գէշ է որ պարզապէս վիժած մը կը դառնայ խեղճը եւ մարդուն յուսահատութիւն կը բերէ:

Տունին անկիւնը կրթութեամբ կ'ընթացնուած մը չես կրնար փոխանակել առանց նշմարելու անոր մտքին ազդեցութիւնը եւ առանց վրան արգահատելու. անոր խօսակցութիւնը զրուանք կ'ազդէ եւ անձրեւի չափ ձանձրանալի կ'ըլլայ:

Վարժարան գացող կիներ կը գրտ-

նաս քիչ մը աւելի փայլուն. քրանսերէն սորված է, քեզ կը կրկնէ օտար ճեղքներով անուշներ մանաւանդ վէպեր որոնց գուցէ միայն հայերէնի թարգմանուածները կարգացած է. հետք վիճարանի կուզէ—ինքզինքը ցոյց պիտի տայ—վճիռներ կ'արձակէ եւ արհամարհանք մը կայ շրթունքներուն վրայ ամէն բանի համար որ հասկցողներէն ճայնակ ուրակուած է: Անոր հակառակ գաղափար մը յայտնել չըլլար, դժբաղդութիւն մը ընել ներքիլ չէ, անմիջապէս կը բորբոքի, ինքզինքը կը կորսնցնէ եւ ահա կը տեսնես յաւակնութիւնը, մեծամտութիւնը եւ արգիտութիւնը արմատ հզած անոր երակներուն մէջ: Խորհելու որոշ կազմակերպ մը զգուրթիւնը, մտաւորական պաշարի մը թերութիւնները եւ ամէնատարրական բաներու տգիտութիւնը աչքի կը զարնեն: Անիկա ինքզինքը քաղաքավար կը կարծէ ու անկիրթ մըն է, գիտունի հովեր կ'առնէ ու իմաստակ մըն է, մտաւորական մը ներկայացուցիչ կուզէ եւ անտարամբանութեան հրաշակերտ մըն է. անիկա հայերէնը անձուռնի կր գտնայ եւ մեր լրագիրները անընթացիկ (եւ իրաւունք սլուելի) աչքը օտար լրագիրներուն անկաճ է ու նորածնութեան թերթի մը պատկերներէն անդին շանցնի:

Ահա մեր աղջիկներուն եւ կիներուն վիճակը ու այս վիճակին դարձան մը տանելու համար էր որ մէկ քանի գիտողութիւններ բլած էի Շարժումի նախագիծ թեւեթն մէկուն մէջ սրուն կը պատասխանեն Միլի և Պ. Աճէմեան ինչդէն կատարելապէս չեղելով ու միմիայն մասնաւոր կէտերու վրայ ծանրանալով:

Այն թեր ու զէմ գրութիւնները որոնք այսօր մեր գրիչներու տակէն դուրս կը սպրդին երթալու գարգը ըլլալու համար լրագրի մը սիւնակներուն, կը նախընտրէի որ նուիրուած ըլլային բուն խնդրոյն, կ'ընդ դաստիարակութիւնը ճշդելու և նորոյն, որուն լուծուած եթէ ոչ ուղղակի օգուտ մը, գոնէ բարոյական զոնւացում մը պիտի պատճառէր երկու կող-

մելու ալ հաւասարապէս. բայց կը տեսնեմ որ սլաք բառին վրայ հայկական սրանտութիւններ ընելը աւելի զիւրիս եւ շահեկան կը համարուի, լրագրի յօդուածներուն օգտակար ըլլալուն կամ չըլլալուն կէտը աւելի կը շեշտուի—չմոռցուելով ազգերու զարգացումը գործին մէջ մամուլին կատարած դերը վարպետ, տուտուրի վեհափառ շեշտով մը աչքս խոթելու—քան բուն խնդրոյն վրայ ուղղակի վիճարանիլը որ վերջապէս հմտութիւն կը պահանջէ:

Յանցանքը իմ չէ, ոչքեմն եթէ ես ալ իրենց օրինակին կը հետևիմ եւ կը ծանրանամ նմանապէս երկրորդական կէտերու վրայ շարունակելու համար յօդուածս որ սահմանուած էր շատ աւելի սա բեր ներթեւրու:

Մեր մէջ կ'ընթացնուած հասարակ լրագիր չկարգար. մէկ կը կարգար, մնասնակեալը Բատրոնը կը լսի: Չկայ այնքան մեծ միամտութիւն մը որքան կարծելը թէ մեր մայրիկները եւ մանուկները կը հետաքրքրուին լրագրի խոսքին: Գրուածքներով որոնք պարզապէս չաղակարատութիւններ եւ անօրուա բաներ նկատուած են: Լրագիրը մեր կիներուն մասնակի չէ եղած եւ չպիտի ալ կրնայ ըլլալ:

Արեւելիք որուն անունը յիշուցաւ իր փայլուն տպագրութիւնը աչքի զարնուած ըլլալուն համար, յօդուածներէն պատեղով մեր հայ կիներուն մտաւորական վիճակին անգլտակ եւ անոր սրամազրուութիւններուն անտեղեկ գրիչներէ կը կատարուի եւ անոր մէջի գրութեանը այնքան անմարսելի եւ խակ են որ շատ անգամ իրենց հեղինակներուն կասկածելի հմտութիւնը կը մտանեն: Կոնստանտնուպոլիսի հայերէն գրականութիւնը թէ անունի մը համար, աչքի առաջ բերուած է երբեք մեր կիներուն հակացողութեան ատժանք:

Մեր մամուլը որուն օգտակարութեանը վրայ կը պնդուի, այնպիսի անհասկնալի եւ ցաւալի ծանր մը մէջ է որ լաւ կ'ըլլայ եթէ մեր կ-

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՐՏՔԸ

(Բանախօսութիւն է. Պէտերսպոլի)

Ինչ կը մնար իրենց, Անոնք որ աշխոյժ ու զարգացած միտք ունենին՝ վաճառական կ'ըլլային ու շատ անգամ լաւագոյն վաճառականներ քան ժողովուրդին միացեալ մասը: Սյուպէս, Քուէյքըրները ի սկզբան թէեւ շքաւոր ազանգ մը կը ներկայացնէին, հիմակ շատ հարուստ ընկերութիւն մը կը ձեւացնեն:

Այսօրինակ իրողութիւններ յաճախողեալ են Արեւելքի մէջ: Յոյժ գործունեայ մտքով բայց ճնշման ենթարկուած ժողովուրդային տարրեր ու է կերպով պիտի գործէին, և բնականաբար վաճառականութիւնը իրենց ձեռքն անցաւ:

Բայց, ինչպէս ամէնէն պարզ մտածումը խորհիլ պիտի տայ ամէն ողջամիտ մարդու, վաճառական, դրամատէր, և այլն, հայոց մէջ շատ

փոքրաթիւ բարձր դասակարգ մըն է: Ժողովուրդին մեծ զանգուածը բազկացած է զեղացիներէ՝ և ասոնք են որ Օսմ. Հայաստանի մէջ ամէնէն զմեղակ կերպով կը կեղեքուին, կը չաւաճուին, կը շահագործուին գոն ձեռքի զանգուած և անոնց է որ պարտիք վերջապէս օգնութեան հասնիլ:

Կը կրկնեմ, Եւրոպոյի միջամտութեան ճնշումին տակ Թուրքոյ հըրատարակած կ'անոնազիրները պարտաւոր էին հայերուն տալ միւս քաղաքացիներուն համահաւասար իրաւունքներ, բայց թուրք պաշտօնատարները աշխատեցան արդիւիլ այդ կանոնադիրներուն գործադրութիւնը, կամ թէ ուղղակի հակառակ իմաստով կ'իրարկեցին զանոնք. բոտ սահմանադրական օրէնքի, հայերը պէտք է որ հաւասար նկատուին մասնատականներուն հետ, բայց իսկապէս ատանկ չեն:

Նախ և առաջ անոնք կը հնձին Թուրքոյ հարկահաւաքութեան դրութեան տակ որ անոնց վրայ կը ճնշէ այնպիսի ծանրութեամբ մը զոր հագիւ կայելի և երեւակայել: Թոյլ ստուէր ինձի ակնարկ մը նետել այն հարկերուն վրայ զոր պարտի վճարել հայ գեղացիին Օսմ. Հայաստանի

մէջ: Երկու տեսակ հարկ կայ. օրինակաւ հարկերը և կաւալակաւ հարկերը: Չը կարծէք որ օրինական որոշ սահմաններ ունին, անոնք կրնան ըստ կամ ընդարձակուիլ, բառին էն գէշ ատուածը առաձգական:

Հայ գեղացին, ոչ մասնատականը, ենթարկուած է նախ պիտեյիլին, անտակ մը զիստահարի զոր անհաւատները կը վճարեն զինուորութեանէ զիր ինտիման:

Այսօրինակ սուրբ մը կրնայ իրաւացի երեւնալ, թէեւ գիտութեան ծառայութեան տղամ փոքր քաղաքակրթնութեան մը կ'ընթացնէ և ստորին դասակարգի կ'իջեցնէ սյդ անօրինութեան ենթարկուողները: Պետեյիլէն այնպէս մը հաստատուած է որ նորածններու համար իսկ պէտք է վճարուի: Իրեւն ուրիշ փոխարինութիւն իրենց գիտութեան ծառայութեան, գեղացիները նաեւ խիստ շատ անգամ կը գործածուին ճամբաներու շինութեանց և տարհապարհակ աշխատութիւններու. սակէց զաս անձնական տուրք ալ կը վճարեն:

Երկրորդ տուրք մը կայ, ընտանիքի հարկ, սաղեան կոչուած, որ քաղաքներուն և գեղերուն համեմատ

հաստատուած է. անոր բախտ մը կատարուած է այդ հայ գեղերուն և քաղաքներուն Իտալիի Ժողովներէն: Այնպէս մը կը կարգադրուի որ հարուստ ընտանիքները կը վճարեն արեւաքաններուն համար, այսպէսով անոնց ամէնուն միջեւ շատ զօրեւոր համարաշարժութիւն մը կը հաստատուի: Երբ հարկը, որուն քանակութիւնը կ'որոշուի պետութեան և պաշտօնատարներու պէտքին համեմատ, սահմանը զի անցնի, ամբողջ գեղին զարգացումը կը կասի:

Յետոյ կուգան շէնքերու տուրքը և կալուածական տուրքը—որագիւ: Այս վերջինը հաստատուած է ոչ թէ կաւաճաններու արժեքին այլ տարածութեանը վրայ. յետոյ արջառի տուրքը այնպէս մը հաստատուած որ, փոխակի համար, համեմատապէս անոնք արժեք ունեցող ոչխարին համար տարեկան 5 դրու (1.25 Քր.) վճարուի: Այս հարկերուն վրայ—որոնք Եւրոպայի հարկերուն են—պէտք է աւելցնել երկրագործական ստրկորութեան տուրքը, իւրիպազ, որ յետին ծայր կը ճզվէ գեղացին: Ան պարտի հարկահաւաքին տալ հողէն հանած բոլոր բերքերուն մէկ մասը. բոտ Եւրոպայի, այս տուրքը 1/3-ը անցնելու

ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

Ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

Ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

Ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

Ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

մէջ աղբիւրի իր գոյութիւնը քաղցրե-

Սուղի վրայ գրողուած սյաքնե-

Ի զուր չե՞ն ուրեմն այն ճիգերը

Իմ գտնուած շրջանակիս մէջ՝ ու-

Ներքին-հարցադրույթի կարգադրույթները...

առնուեցաւ. ինչո՞ւ ուրեմն կը հրա-

Ո՛չ, իմ գրերս հայ մամուլի դերը

Իմ մէջ քանի դիտողութիւններուս

Որքան որ մեր մէջ իւրաքանչիւր

չպիտի ըլլան տգէտ մայրը եւ իմա-

Իւստասակ կինը-աղջիկ կամ մայր-

Բայց ի՞նչ ընէ խեղճը, կեղծիքի

Մինի եթէ կուզէ ճշմարտապէս իր

էն, բայց իր կայսէս ան կը բարձրանայ

Հարկերու ստանկ գրութեամբ մը,

Թուրքիան անհանգիստ էր իր ստա-

Ինչպէս շատ անգամ կը լայր ելրու-

կրնաք երեւակայել թէ ի՞նչ կը լայր

Ամէն տարբ աստի, տուրքեր կ'ա-

Հայերուն սրբիւրեւած է գէնք կրել:

Օսմ. Հայաստանի մեծ մասը կը

ասոնք ոհար մարդիկն են, գէնք

Քիւրտերը հայ դեղացիներ կը նկա-

Աստուծոք, աստիճան մը կը զսպէին

Երեմն հայերը կրցած են զէնք

Քիւրտերը, ինչպէս թիւրքերը,

չէրքէզները, եւայն:

Այսպէս հայ ժողովուրդին կեղե-

Բայց ամէն բանէ առաջ կատարա-

(Շարունակելի)

ծելը հապա նաև օտարահնչիւն ա- նուաններու ասկ ծածկուելը . հրաւի- րելու է գրողները որ եթէ տրպար եւ ճշմարտագէտ կալան պաշտպաններ ըլլալ կուզեն . Ֆրանսական բառ շՊԸ- նեն իրենց պաշտպանողականներուն մէջ եւ այլն եւ այլն :

Մեզ կարգացողներ կամ հասկցող- ներ ըլլան թէ ոչ մենք սովոր ենք գրել . ասիկա ունակութիւն մըն է . գրելը փոյթ չէ բայց գլխանք թէ օղին մէջ պիտի կոխուին անոնք եւ գրելով անպատճառ նպատակի մը հա- սած չենք ըլլար :

Եթէ ես կը գրեմ Պոլսոյ հայ-լայֆ ըսուած անզոյ գասակարգին դէմ . գիտեմ թէ ձայնս միջնա հուն չհաս- նիւր . բայց ուրիշ ի՞նչ կրնանք ընել միթէ քաղաքացիս գոհացում ստանալը եւ խիղճը հանդարտ եցնելը պիտի կ վարձատրութիւններ են :

Յորմէ հետէ աշխարհք սյնիլու- սիտեմ կը դառնայ . կինն ալ շար- փուս կալուած մը նկատուած է կամ անձնական շահու եւ կամ հանրային շահու համար . Մեր մէջ կինը այս երկու գերն ալ կը կատարէ եւ շատ անգամ միասին :

Բարենպասակ հաստատութիւննե- րու համար կիններն առաջ քշելը եւ անոնց դրամ ժողովել տալը միշտ յաջողութիւն գտած է . Ժրատ էրիկ մարդոց հախճէն կիները միայն կրնան գալ . կինը դիմում մը ընելուն պէս քսակները կը բացուին . անքա- ղաքալարութիւններ եւ կոշտ խօս- քերը շատ անգամ զանց կտանուն ու կը վերապահուին էրիկ մարդոց . զը- րամը կը հաւաքուի ու ահա նպատակը միջոցը կարգաբանէ :

Այսպէս ալ ու այս մտածումով Պոլսոյ կիները իրենց պարտքը կը կատարեն . բայց արտասահմանի կիները ետ մնացած չունին իրենց Պոլսեցի հայուհիներէն . օրինակ . Եւեմուայի եւ Վառնայի կիները . եւ արտասահմանի կիներուն ըրած ամէն մէկ գործը հոս միամտի նշանակելը երկայն կրկայ . Սահմանափակ տեսութիւններու մէջ չպարփակուած մէկը իր շուրջը նա- յելով կրնայ համոզուիլ :

Բայց չգիտեմ թէ ինչո՞ւ երեսիս կուտան Պոլսոյ հայուհիներուն տուած աշխատանքները եւ մեր կիններուն ջանքերը . Ես չեմ մեր կիները դա- տապարտողը թէ անոնք գուրթ . ու զորմասիրութիւն եւ աղապատանք չունին . ընդհակառակը . անոնց այդ բաներուն շատ ընդունակ ըլլալը կը հաստատուի Սիւալ դուռ մը զարնուած չէ՞ արդեօք ու հօրկ է . տեղը կա՞յ անգամ մը եւս ապացուցանելու թէ լրագրական յօդուածները ու շաքրու- թեամբ չեն կարգացուիր նոյն իսկ բանագէտներու կողմանէ եւ ժամանցի տարտամ հաճոյքը միայն կը պատճա- րեն ինչպէս պարոն-հայերուն խում- բին պատկանողներէն շատերու այն- պէս ալ փափուկ սրտով միևնրմիևի էակներու :

Սլոյ

ՍՕՅՆԱԼՈՒՄ ԵՒ ԱԼԿՈՍՍՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ

Գ.

Բէլգիական պարլամենտի անդամ և բանւոր-օսցիւթիտների կուսակցու- թեան ներկայացուցիչ ամենայայտնի օսցիւթիտ էմիլ Վանդերվելդը ասում է :

«Հաւասարապէս տիրապետող երկու- թէօրիաներ կան . որոնք ինձ համար սխալ են . մին . որ թշուառութեան է վերագրում ալկոլականութիւնը . և միւսը . որ ալկոլականութեան է վե- րագրում թշուառութիւնը : Մին ասում է . — ալկոլականութիւնը թշուառ- թեան հետեւանք է . նրանից է ա- ուջ դուրս . ալկոլի չափազանց գոր- ծածութիւնը կապիտալիստական դրու- թեան արդիւնք է և միայն այդ բե- ժմի հետ կարող է անհետանալ :»

«Նոյնիսկ ասողներ կան . որ եթէ կարելի լինի ներկայ բեժմի տակ ալ- կոլի գործածութիւնը դադարեցնել . բանւորներին շատ զեշ մի ծառայու- թիւն մատուցած կը լինին . որովհե- տեւ ալկոլը հարկաւոր մի չարիք է . զէշ սնունդ տանող և չարաչար աշ- խատող բանւորներին համար . մի ան- հրաժեշտ գրգռիչ է :»

«Մրէյ . Եմիլ Ֆորէլի և շատ ու- թիւնների ուսումնասիրութիւնից յետոյ հարկ չեմ տեսնում ապացուցելու . որ ալկոլականութիւնը մի հարկաւոր չա- րիք չէ . նոյնիսկ զէշ սնունդ տանող մարդու համար . մեր բոլոր պարտա- կանութիւնն է նոյնիսկ թշուառներին ասել . որ — ալկոլը թոյն է . այն էլ բոլոր աշխարհի համար :»

«Ալկոլականութիւնը մի միայն թշուառութեան արդիւնք չէ . նա հա- շտատապէս իշխում է և բուրժուա և պրոլէթար դասակարգի մէջ . Երբ ուսումնասիրուած է ալկոլի գործա- ծութիւնը մի որոշ երկրում . օրինակ Բէլգիայում . հաստատուած է . որ ամենաթշուառ ժողովրդները չեն որ ամենաշատ ալկոլ են գործածում : Ան- կասկած է . որ . օրինակի համար . Ֆլանդրիայի երկիրը անտեսական ամենաթաւ պայմաններին մէջ է դտնուած քան թէ հարուստ և արուեստներով ծաղկած Վալլոնիայի երկիրը . Ֆլանդ- րիայում վարձը ցած է . իսկ Վալլո- նիայում բարձր . Արդ . հաստատուած է . որ Ֆլանդրիայում աւելի քիչ իւր- միջք է գործածուած քան թէ Վալ- լոնիայում . Ի՞նչ ասել է այս . Ի՞նչպէս պէտք է բացատրել այս երեւոյթը . Ամենաթշուառ պատճառը այն է . որ Ֆլանդրիայում ալկոլի համար վատ- նելու քիչ փող ունեն . . .»

«Ասում են . որ ալկոլականութիւ- նը կապիտալիստական բեժմի անկե- ղան հետեւանք է . որը երբեք չէ ան- հետանալու . եթէ ոչ նոյնիսկ այդ բեժմի հետ . արդ այստեղ ես ստիպ- ւած եմ հաստատելու . որ կապիտա- լիստական ամենամեծ անկեղծում ունե- ցող երկիրները չեն . որ անհրաժեշ- տօրէն աւելի շատ ալկոլ են գործա- ծում : Ըստ Եւսթէի հետեւեալ վիճա- կագրական ցուցակի . Անգլիան . այ- խարհիս ամենակապիտալիստական և ամենաարդիւնարեական երկիրը . Գերմանիայից և Ֆրանսիայից՝ որտեղ ժողովրդի կիսից աւելին տակաւին երկրագործ է՝ աւելի քիչ ալկոլ է սպառում :»

Միացեալ Նահանգներ 52,7 0/0 ար- դիւնաբերող—3,76 ալկոլ մարդազու- թիւնմանիւ 53,3 0/0 արդիւնաբերող— 8,80 ալկոլմարդազու- թիւնմանիւ 53,7 0/0 արդիւնաբերող—8,38 ալկոլ մար-

դազու- թիւնմանիւ 54,1 0/0 ար- դիւնաբերող—5,19 ալկոլ մարդա- զու- թիւնմանիւ 70,6 0/0 արդիւնաբե- րող—9,50 ալկոլ մարդազու- թիւնմանիւ և կալու 88,5 0/0 արդիւնաբերող —4,58 ալկոլ մարդազու- թիւնմանիւ 85,8 0/0 արդիւնաբերող—4,58 ալկոլ մարդազու- թիւնմանիւ 58,9 0/0 արդիւնաբերող—4,58 ալկոլ մարդա- զու- թիւնմանիւ

Գոյ. Յ. Կ. Փաշայեան

Յ Ի Ա Գ Ի Ն Մ Ե Ր Ի Ս Ց Ո Ւ Մ Ե Ր

Փիլիպէէն . հնչակեան մը նա- մակ մը կուզէ մեզ . ուսկից ուս տողերը կը քաղենք .

Տեղոյս Հնչակեան միացեալ զը- միթէի անգամ է նաև Կ. Մ. անուն անձը . որուն դուք ատենօր շվայիէ s'իեսիւքրի տեղադր տուիք . Այդ նշանաւոր առաւ-փօրաւ աւագակին մինչև ցարդ կարած չուանները ար- գելք մը չեղան որ նորէն ասանկի փա- փուկ գործ մը չվտանջուի անոր :

Թէև ալ նախկին անձին ա- նունը արուած չէ հասկնալի նկա- տումով մը . բայց մենք ինչպէս նաև մեզի հետ ամէն մարդ շու- տով պիտի կուսէ անոր սվ ըլլա- լը :

Յաւալի ու զարհուրելի բան . Ըսել է որ Հնչակեան միւս . թիւնը՝ ուրիշ շատ մը այլանդա- կութիւններու մէջ՝ տիտղոսուած օրիկաներ . զեղծարարներ . ա- ռաւ-փախաւներ իրենց յաճկա- ցած տիղմէն դուրս քաշելու և ազդին փրկութեան գործը անոնց թունաւոր և գիշատիչ ճանկերուն յանձնելու ոճիւրն ալ գործած է . Յաւալ եկէ՛ք . միութենական- ներ . տեսնելու ձեր աղաղակած միութեան վիժած հրէշութիւն- ները :

ԱԶԳԱՑԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիզէն կը գրեն մեզ թէ Ա- րեւելեան կենդանի Լեզուներու վարժարանին հայերէնի նոր գո- տախօս պ. Ա. Մէյքէ առաջարկած է Արշակ Չօպանեանի արդի հայ գրականութեան վրայ ամիս ան- դամ մը դասախօսութիւն մը՝ Ը- նել իր շրջանցիկ մաս իր հա- յերէն լեզուի դասին :

Յիշեալ վարժարանին մէջ հայ երիտասարդ գրագէտին մուտքը ուրախալի պարագայ մըն է և մի անգամայն պատուի և յար- գանքի ցոյց մը ժամանակակից հայ գրականութեան մատուցած : Դասախօսութեան այդ բեմին հա- մար արժանաւարագոյն լինարու- թիւն մը չէր կարելի ընել :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վէնէցուէլայի ԽՆԴԻՐԸ Վէնէցուէլայի կնճռոտ խնդիրը կերկարի . հիմակ աւելի սուր հանգամանք մը ստացած է՞ . վա- նդի Անգլիոյ նախարարապետ պ. Պալֆուր յայտարարեց թէ պատերազմական վիճակ կը կե-

նայ՝ մէկ կողմէն Վէնէցուէլայի միւս կողմէն Անգլիոյ ու Իեր- մանիոյ միջև . Աւրիշ տէրու- թիւններ ալ իրենց առնելիքները կուզեն Վենեցուէլայէն . Պեթիա . Սպանիա և Իտալիա . այս վերջ- նոյն դեպքանը նոյն իսկ մեկնած է Գարաքասէն :

«Թան՝ իր մէկ խմբագրակա- նին մէջ սա տողերը կը գրէ . «Վտանգաւոր վէճ մըն է՞ Գալիա . վասնզի . թէև մէկը չը խօսիր այդ մասին . սակայն տմէն մարդ Անգլիոյ և Իերմանիոյ տնտեսա- կան պահանջումներուն լծակը քաղաքական թաքուն մտածում մը կը կասկածի . այն է Բանա- մայի ապագայ շրանցքին շրջա- կալքը ազդեցութեան և զննու- թեան տեղ մը տեղծելու :

Անգլիոյ և Գերմանիոյ Միացե- եալ նաւատորմը ուժեղացնելու իտէրգօ Գապէլլոյի ամրութիւն- ները որոնք կործանեցան հիմնա- յատակ : Գրէթէ վէնէցուէլեան բոլոր նաւատորմը կամ բաժնուած է կամ ջնջուած :

Խախազան Գասթրօ կը շարու- նակէ իր անհաշտ և ըմբոստ դիր- քը . Բուէրգօ Գապէլլոյի ուժա- կոծման առթիւ յոյժագրգռիչ շը- ջարեական մը հանած է . որուն մէջ կը պարտաւէ դաշնակից տե- րութիւններու ապօրէն ու վայ- րագ ընթացքը և Վէնէցուէլա- ցիներուն վրէժխնդրութիւնը կը գրգռէ եւրոպացիներուն դէմ :

Անգլիոյ մէջ՝ թերթերը կը յորդորեն կառավարութիւնը զզոյշ դիրք բռնել և . միւս կող- մէ . կը քննադատեն դժբաժն կառավարութիւնը՝ իր բուն ընթացքին համար :

Միացեալ—Նահանգաց կառա- վարութիւնը մինչև ցարդ այս վէճին մէջ հանդարտ գիտով դիրք մը պահած է և նոյն իսկ զայն հտտարար կերպով վեր- ջացնելու միտում մը ցոյց կու- տայ . և ամէն ճիգ կը թափ համոզելու համար Անգլիան . Գերմանիան և Իտալիան որ ը- դունին իրաւարարութիւնը և որ մտքով գրութիւններ զրկուե- են Ուաշինկթընէն . կրտուի թէ Անգլիա տրամադիր է ընդունիլ Միացեալ—Նահանգաց առաջար- կը . բայց կը յայտարարէ թէ չի կրնար Գերմանիայէն անկախա- բար գործել . իսկպպէս վերջինը կը մերժէ իրաւարարութիւնը վտանգութիւն չունենալով Վէնէ- ցուէլայի ու զլամտութեանը վրայ՝ Միաց որ ամերիկեան կառավա- րութիւնը չեղաչափութեամբ կորի միջնորդութեամբ որոշուիլ պայմաններուն գործադրութե- նը :

Վէնէցուէլայի ծովեզերքները պաշարման վիճակի են թարկուած են :

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатища „Въаиностъ“ Варв.